4ապրիլի 2011 թվականի N 278 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 501-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հունիսի 18-ի «Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 501-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«

8.	Պայմանագրի կնքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ	2011թ. հունիս	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (ԷԿԵՆԳ)»ԲԲԸ (համաձայնությամբ)

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. ապրիլի
Երևան

11_0278